

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավոր, Օհայո

Հոկտեմբեր 21, 1981

Գեր. Տ. Թոտգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ  
Հայոց Ամերիկայի,  
Առաջնորդարան Հայոց,  
ի նիւ Եորք, Ն.Ե.,

Գեր. Սրբազան Հայր,

Ներկայս կը գրուի Ձեր Քլիվլենտի մօտոյ այցելութեան առնչութեամբ,  
ի հետեւութիւն նախորդ նամակիս՝ զայն ձեռով մը ամբողջացնելու միտումով՝  
ի տես կարգ մը նորութեանց:

Նախ եւ առաջ յիշենք որ՝ ուրախ եղանք Տիկ. Կէօքճիեանէ լսելով որ՝ յիշ-  
եալը սիրալոյս փութացեր է իր բնակարանը ձեր տրամադրութեան տակ ղնելու  
եւ ձեզի օթեան հայթայթելու ձեր Քլիվլենտ այցելութեան ընթացքին: Կը  
յուսանք պիտի կրնաք օգտուիլ ընձեռուած պատեհութենէն: Ինչ որ կը խոստանայ  
ձեր կեցութիւնը ըսելի հանգստաւէտ դարձնել մինչ Քլիվլենտ կը մնաք: Կ'ու-  
զէինք գիտնալ որ ի տես այս նոր իրադրութեան՝ ձեզի համար պանդոկ ապահովե-  
լու անհրաժեշտութիւնը պիտի ներկայանայ թէ ոչ: Նաեւ կարելի է արդեօք  
Ուրբաթ իրիկուն առանցնակի հանդիպում մը ունենալ Ծխական Խորհուրդին հետ.  
Տիկ. Կէօքճիեանի բնակարանին մէջ ուր կը յուսանք պիտի օթեանիք. ասիկա  
կախում ունի անշուշտ Եկեղեցեաց Խորհուրդի փակման պահէն: Եւ ելցնենք որ  
ասիկա չի շնչեր Ծաբաթ երեկոյեան մեր սկզբնական կարգադրութիւնը՝ այն է՝  
ճաշ եւ հանդիպում եկեղեցւոյս յարակից զանազան մարմիններու ներկայացու-  
ցիչներուն հետ: Ատկէ զատ փափաքելի պիտի ըլլար գիտնալ ի յառաջագունէ որ  
երբ կը ծրագրէք մեկնիլ հոսկէ Կիրակի իրիկուն թէ երկուշաբթի առաւօտ:

Ապա կ'ուզենք ձեր նկատողութեան յանձնել սա թէ փափաք յայտնուած է տեղ-  
ւոյս Ծաբաթօրեայ Հայ Դպրոցի խնամակալութեան կողմէ՝ որ կը ղեկավարուի Հ.  
Բ. Ը. Մ. Եան տեղւոյս մասնաճիւղին կողմէ, թէ արդեօք կարելի պիտի ըլլայ ձե-  
զի համար որ այցելութիւն մը տայիք դպրոցին: Դպրոցին դասապահն է 9.30-  
12.00, առաւօտեան ժամէն մինչեւ միջօրէ:

Իսկ վերջին հարցը կը վերաբերի Դպրութեան աստիճանի տուչութեան: Այսու  
պիտի փափաքէինք ձերը Սրբազնութեան դիմում ընել պաշտօնապէս որ բարեհա-  
ճէիք դպրութեան աստիճան շնորհել երկուորեակ Գարայեան պատանի եղբայրներու.  
Մէկուն անունն է Ֆիլիփ Վահէ-Վահրամ, իսկ միւսին անունն է ձէյմս Յակոբ-Հայկ:  
Ասոնք մի քանի տարիէ ի վեր մոմակալութիւն ընելով կը ծառայեն Ս. Խորանին,  
մեր Կիրակնօրեայ պատարագներուն ընթացքին, առանց բացակայութեան: Ասոնք մաս-  
նակցած են նաեւ Ամառնային Սարկաւազաց դասընթացքի մը: Իսկ մեր նախորդ նա-  
մակով խնդրած էինք ձեզմէ որ Ս. Սեղանիս սպասարկող զոյգ մը երիտասարդներու  
ալ շնորհէք Ուրարակի ի աստիճան: Կրնանք ուրեմն յուսալ որ ձեզ յառաջիկայ  
այցելութեան այս զոյգ շնորհաբաշխութիւնները կատարէք: Նաեւ լսած եմ որ  
դպրուհիներու քօղերը կ'օրհնուին փոխան գիրենք դպիր ձեռնադրելու, որքան որ  
գիտեմ մեր դպրուհիներուն քօղերը երբեք չեն օրհնուած, կը խորհիք որ ժամա-  
նակը հասած է անոնց քօղերու օրհնութեան: Ուրախ պիտի ըլլանք եթէ վերոյիշ-  
եալներէ ի մօտ ունենաք ձեր յառաջիկայ այցելութեան քաղաք եւ տնօրինիք պարտն  
ու պատշաճը:

Խոնարհ Աղօթակից՝  
REV. FR. DIRAN PAPAZIAN - PASTOR